

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱ-  
ՀՈՎՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տիեզերական գործունեության ոլորտում համագործակցության ապահովման հայկական կողմի աշխատանքային խմբի (այսուհետ՝ աշխատանքային խումբ) նպատակի, գործառույթների, գործունեության, աշխատանքների համակարգման, կազմակերպման և ղեկավարման հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատանքային խմբի հիմնական նպատակը տիեզերական գործունեության ոլորտի զարգացումն է:

3. Աշխատանքային խումբն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, միջազգային պայմանագրերով, սույն կարգով և իրավական այլ ակտերով:

II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Աշխատանքային խմբի խնդիրն է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տիեզերական գործունեության ոլորտում համագործակցության ուղղությունների հստակեցումը, անելիքների որոշակիացումը, տիեզերական տեխնոլոգիաների նախագծման, մշակման և արտադրության շրջանակներում փոխգործակցության ընդլայնումը:

5. Աշխատանքային խումբն իր առջև դրված խնդիրների կատարման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ուսումնասիրում է տիեզերական գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության կարիքները և սահմանում է համագործակցության ուղղությունները.

2) վերհանում է տիեզերական գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության կարիքները և առաջնահերթությունները.

3) ուսումնասիրում է տիեզերական գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության հնարավորությունները և իրականացնում գույքագրում.

4) ռուսական կողմի աշխատանքային խմբի հետ քննարկում է համագործակցության հիմնական ուղղությունները և նախանշում դրանց իրականացմանն ուղղված միջոցառումները.

5) տիեզերական գործունեության ոլորտում Ռուսաստանի Դաշնության կողմից իրականացվող աշխատանքներին և գույքագրմանը ծանոթանալու, ինչպես նաև համատեղ հետազոտություններ և ուսումնասիրություններ անելու նպատակով կարող է իրականացնել այցելություններ և հանդիպումներ.

6) իրականացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից հանձնարարված և սույն կարգով չնախատեսված այլ աշխատանքներ:

### III. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Աշխատանքային խումբն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:

7. Աշխատանքային խմբի նիստերը հրավիրում և վարում է աշխատանքային խմբի ղեկավարը:

8. Աշխատանքային խմբի ղեկավարի բացակայության դեպքում աշխատանքային խմբի նիստը կարող է վարել անդամներից մեկը՝ աշխատանքային խմբի ղեկավարի համաձայնությամբ:

9. Աշխատանքային խմբի արտահերթ նիստ կարող է գումարվել աշխատանքային խմբի ղեկավարի նախաձեռնությամբ կամ աշխատանքային խմբի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

10. Աշխատանքային խմբի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է աշխատանքային խմբի անդամների առնվազն 2/3-ը:

11. Աշխատանքային խմբի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների ձայների 2/3-ով: Քվեարկության ընթացքում աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

12. Աշխատանքային խմբի նիստերի վերջնական օրակարգը և քննարկվելիք հարցերին վերաբերող այլ անհրաժեշտ փաստաթղթերն աշխատանքային խմբի անդամներին են փոխանցվում նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ՝ բացառությամբ հրատապ դեպքերի: Տվյալ դեպքում աշխատանքային խմբի անդամները նիստի օրակարգի և այլ անհրաժեշտ փաստաթղթերին ծանոթանում են նիստի ընթացքում:

13. Աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամ նիստին մասնակցելու անհնարինության դեպքում կարող է տեղեկացնել աշխատանքային խմբի ղեկավարին՝ իրեն փոխարինող անձի թեկնածության առաջարկը ներկայացնելով նիստից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ:

14. Աշխատանքային խմբի աշխատանքներում կարող են ներգրավվել փորձագետներ և պետական այլ մարմինների ներկայացուցիչներ:

#### IV. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԸ

15. Աշխատանքային խմբի ղեկավարը՝

- 1) համակարգում է աշխատանքային խմբի գործունեությունը.
- 2) հրավիրում և վարում է աշխատանքային խմբի նիստերը.
- 3) իր բացակայության դեպքում աշխատանքային խմբի ղեկավարի լիազորությունների կատարումը հանձնարարում է աշխատանքային խմբի անդամներից որևէ մեկին.
- 4) նշանակում է աշխատանքային խմբի նիստի անցկացման վայրը, օրը և հաստատում օրակարգը.

5) աշխատանքային խմբի աշխատանքների և ընթացքի մասին աշխատանքային խմբի կողմից պատրաստված տեղեկատվությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ յուրաքանչյուր ամիս.

6) հաստատում է աշխատանքային խմբի անդամների անհատական կազմը, աշխատանքային խմբի անդամին փոխարինող անձի թեկնածությունը.

7) որոշում է կայացում աշխատանքային խմբի աշխատանքներում փորձագետներ և պետական այլ մարմինների ներկայացուցիչներ ներգրավելու մասին.

8) վերլուծություններ կամ ուսումնասիրություններ կատարելու նպատակով աշխատանքային խմբի անդամներին տալիս է ցուցումներ և հանձնարարականներ.

9) իրականացնում է աշխատանքային խմբի գործունեությամբ պայմանավորված՝ իրեն վերապահված այլ գործառույթներ:

#### V. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

##### 16. Աշխատանքային խմբի անդամը՝

1) պարտավոր է անձամբ մասնակցել աշխատանքային խմբի նիստերին, իսկ մասնակցության անհնարինության դեպքում՝ դրա մասին նախօրոք գրավոր տեղեկացնել աշխատանքային խմբի ղեկավարին՝ նշելով նիստին իր փոխարեն մասնակցող անձի տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը).

2) կարող է աշխատանքային խմբի քննարկմանը ներկայացնել հարցեր՝ համապատասխան հիմնավորմամբ.

3) աշխատանքային խմբի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացնում է բանավոր կամ գրավոր (հատուկ) կարծիք.

4) քվեարկում է աշխատանքային խմբի օրակարգում ներառված հարցերի շուրջ կայացվող որոշումների համար.

5) աշխատանքային խմբի կողմից ընդունված որոշման հետ համաձայն չլինելու դեպքում ներկայացնում է գրավոր (հատուկ) կարծիք.

6) աշխատանքային խմբի ղեկավարի հանձնարարությամբ հանդես է գալիս որպես հարցը նախապատրաստող և զեկուցող.

7) առաջարկ է ներկայացնում աշխատանքային խմբի աշխատանքներում փորձագետների և պետական այլ մարմինների ներկայացուցիչների ներգրավման վերաբերյալ.

8) իրականացնում է ուսումնասիրություններ և վերլուծական աշխատանքներ և դրանց արդյունքում կազմում է համապատասխան տեղեկանքներ.

9) իրականացնում է աշխատանքային խմբի անդամի կարգավիճակով պայմանավորված այլ գործառույթներ.

10) պաշտոնից ազատվելու պահից կորցնում է աշխատանքային խմբի անդամությունը: Նրա փոխարեն աշխատանքային խմբին անդամակցում է նույն պաշտոնն ստանձնած անձը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ